

1741

4.12

3



ՀԱՄԱՐԱԽԱՔԵՐ ՌԹԵՎԻԹՅՈՅ լրագիրը հրատարակուում է իւրաքանչիւր ամսի 10 և 20 ին. տարեկան գինը ՃՈՒՆԻՍԵՂԻ հետ 'ի միասին է 5 ռուբ. արծաթ. իսկ կէս տարուանը 3 ռուբ. արծ. կանխիկ վճարելի:

ՕԳՈՍՏՈՍԻ 10

Հ. 1

1861 ՄՄԻ

ՄԱՍԻՔԻՆ

1861 Օգոստոսի 1.

«ՀԱՄԱՐԱԽԱՔԵՐ լրագիրը պարբեր գրական»:
«Որպէս ջուր ցուրտ անձին ծարաւոյ ա-
խորժելի է, նոյնպէս ԱՐԵՎԻԿԱՅԻ բարեաց
յերկրէ հեռաւորանէ»:

ՍՈՂՈՄՈՆ

ՀԱՄԱՐԱԽԱՔԵՐ լրագիրս սկսանելով իւր տարեկան շրջանը (թէպէտ և բաժանորդաց թիւը դեռ հասած չէ այն թուին, որ նշանած էինք), դուրս է գալիս մեր հայրենակիցների առաջ բոցավառ սիրով և անձնանուէր ծառայութեամբ և յոյս ու նի, որ նոյն սիրով ստանայ նոցանից բարեհաճ ընդունելութիւն, և դորանով՝ քաջալերութիւն՝ առաւելագոյն ջերմեւ ռանգութեամբ շարունակել իւր սկզբնաւորած աշխատանքը, և ունենալ մի միայն նպատակ իւր գործունէութեան մէջ՝ ազգի մտաւոր և բարոյական երջանկութիւնը, որի համար և որ հարազատ որդին հայրենաց պատրաստ չէ զոհելու նա ևս իւր կեանքը: Ահաւոր, որով պէտք է հաղորդենք ընթերցողներին՝ թէ օտարազգի լրագիրներից և թէ մեր սեփական թղթակցութիւնից հաւատարմապէս առած տեղեկութիւնները, լինելու է աշխարհիկ և ժողովրդի խօսակցութեանը՝ որչափ կարելի է՝ մերձաւոր: Այդ նպատակով, այլոց մեզ հաղորդած որ և իցէ լուր, Համբաւաբերը ուրախութեամբ կընդունէ իւր թերթերի մէջ և կտպագրէ՝ առանց փոփոխութեան՝ երբ զրուածը կլինի աշխարհաբառ, չնայելով նորա լեզուի դաւաճական զանազանութեանը, և միայն զրոյց լեզուով զրուածի մէջ, հարկաւոր կհամարէ առնել փոփոխութիւններ, և այն եթէ զրուածը պահանջէ քերականական ուղղութիւն:

Համբաւաբերը խնդրում է Ստուծոյ նախախնամութիւնից, որ կարողանայ սպազայումը հաղորդել հայրենակիցներին այնպիսի լուրեր, որ լինին Հայոց ազգիս ուրախարար և օգտաբեր, լինին նորա համար ոչ թէ համբաւ միայն, որ ընծայում է ժամանակակաւոր և վաղանցիկ բաւականութիւն մարդկային մտքի բնածին հետազոտութեանը, այլև ազգային բարեբաւութեան հետք, ազգային յուսալի բարօրութեան և, որ կարողանայ զուարճացունել իւրաքանչիւր Հայկազնէի սիր-

տը, զրաւել նորա հոգին, շարժել նորա զգացմունքը, որ իւրաքանչիւր հարազատ Հայ մին բերկրալի աւետոսաց լուր ստացած Համբաւաբերիս միջնորդութեամբ՝ կարողանայ գոնեա մին օր իրաւամբ բացազանչել՝ «Ասելի արարեր ինձ, Տէր, զընծութիւն և զուրախութիւն, և ցնծացան ոսկերք իմ տառապեալք»:

Այդպիսի հոգեզուարճ զգացմունքները սառնանում են մարդու սրտումը, երբ դարձուցանում են մեր հայեցողածը ազգի ներկայ վիճակի վերայ: Անբաղդօրէն մեր ունեցած տեղեկութիւնները և ազգի մէջ շրջող խնդիրները ներկայ ժամանակում, ոչ թէ ուրախարար չեն, այլ և շատ տրտմալիթ. բայց ի՞նչ պէտք է առնենք. համբաւները վարդի նման են, որ առանց փշի չեն լինում, և ճմարտապատում Համբաւաբերը պարտաւոր է ամենայն եղած անցք, թէ ուրախարար և թէ տրտմեցուցիչ, բայց և նշանաւոր որ և իցէ պատճառով, առանց դանդաղութեան, առանց այլայլութեան հաղորդել ընթերցողներին, ուրախարարը՝ բերկրապատար և անհամբեր սրտով, տրտմականը՝ հոգեկէզ ցաւակցութեամբ, սակայն թէ այս և թէ այն դիպումում՝ լինել իւրաքանչիւր իրողութեան ճիշդ և հաւատարմացոյց հայելի: Այն մին կողմից տեսանում ենք մեր ազգումը ակներև յառաջադիմութիւն լուսաւորութեան ասպարէզումը, սէր և հոանդն ուսման և կրթութեան, մին կողմից փոյթ հիմնելու ուսումնարաններ և դպրատուններ, ուր և որչափ ներում են տեղական հանգամանքները, ջանք և հետեւողութիւն օրագիրներ և լրագիրներ տպագրելու, միւս կողմից նորա քաղաքական կեանքի մէջ նկատում ենք զանազան անկարգութիւն, տարածայնութիւն, նախանձ և կուտակցական հոգի ատելութեան, որոց ամենեցուն միակ աղբիւրը համարուում է մեր ազգի մէջ թաղաւորած անմիաբանութիւնը:

Համբաւաբերը այս վերջին ժամանակներում Ռուսիա բնակ Հայոց մէջ եղած գլխաւոր խօսակցութիւններին ուշադիր լինելով, դատնում է երեք խնդիր, որոց վերայ համարեա թէ ամենայն մարդ մտածում է և խօսում: Այդ խնդիրների առաջինն է Պ. Նաղարեանցի առաջարկած մեր Ափղեցու

Բեֆֆու. երկրորդը՝ Տիֆլիսու «Ներսիսեան դպրոցի բարեկարգութիւնը. երրորդը՝ «Նոր Նախիջևանի մէջ անցած վերջին անցքերը: Այդ խնդիրներն առաջինը, թէև սկզբումը ոչինչ համարուեցաւ և ըստ երևութիւն մօտ էր վերջանալու (շնորհակալութիւն այն հերքմանց, որով մին քանի հարազատ Հայք դուրս եկան Բեֆֆորմի առաջ և սաստիկ հալածեցին նորան), բայց այնու ամենայնիւ կարծես թէ պիտի շարունակուէր, միայն ոչ այն ճանապարհով, որով ընթանում էր մինչև այժմ, այլ մին այլ ճանապարհով, որ աւելի զօրեղ է և հաստատուն: Պ. Չերքէզեանցը, որ յանձն էր առել աշխատութիւն զգուշացուցանելու իւր հայրենակիցներին օտարութեամբ վարդապետութիւններից, բաւական համարելով հերքել այլանդակ Բեֆֆորմը առանձին յօդուածներով, որ յայտնի են ընթերցողներին, նամակ է գրած մեր Ա. հասկառ. Սրբ. բաղնակատար Վաթուղիկոսին, և կանոնաւոր կերպով խնդիր՝ Էջմիածնի Սրբազան Սիւնհոգոսին, որոց մէջ խնդրում է վճռել կամ Բեֆֆորմի հարկաւորութիւնը և կամ անհարկաւորութիւնը: Եթէ հարկաւոր է, ասում է նա, Բեֆֆորմ, եթէ հնացած և մաշված է մեր եկեղեցին, թող ուրեմն նորոգէ՛նորա կենդանութիւնը մեր հոգեւոր բարձրագոյն Ատենը Ս. Էջմիածնի, որ մեր աղբը ևս, որպէս ասում է Պ. «Նաղարեանցը, խաւարից դուրս գալով՝ մի լոյս տեսանէ, մի կենդանութիւն ստանայ, պատուաւոր անդամ լինի մարդկութեան, և վերջապէս քննող ու զննող քրիստոնեայ՝ աւետարանական վարդապետութիւնը հասկացող: Իսկ ընդ հակառակն, եթէ առաջարկուած Բեֆֆորմը ոչ միայն հարկաւոր չէ, այլ և սարսափելի և ազդակործան, թող սորա ևս վճիռ տան, որ ժողովուրդի միտքը խաղաղուի և վերջանան այդ կրօնական կռիւները և տարաձայնութիւնը, որից մեր Ուսմիաբնակ ազգայինը ազատ էին մինչև այժմ, և որ բաց 'ի վնասից'՝ այլ բան չունին բերելու ազգի միութեանը: Որպիսի ընթացք ստանալու լինի այսուհետև այս գործը, լրագիրս պիտի ծանուցանէ իւր ժամանակին:

Երկրորդ խնդիրը («Ներսիսեան դպրոցի բարեկարգութիւնը») դեռ չէ յայտնի, թէ որպիսի ընթացք պէտք է ստանայ ապագայում. բայց առաւելապէս յուսալի է լուր, որովհետև նորա մէջ եղած վերջին անկարգութիւնները բարձուել են Սրբազան Վաթուղիկոսի խոհանարան տնօրէնութեամբ, և Տիֆլիսու հասարակութեան համամիտ և համադր ճշմարիտ ազգասիրական գործունէութեամբ: Վարդոցի կառավարութիւնը պէտք է լինի թէ եկեղեցականներից և թէ աշխարհականներից ընտրած պատուաւոր անձանց ձեռում, «միշտ 'ի լիակատար կախման ճայրագոյն Պատրիարքի և Վաթուղիկոսի ամենայն Հայոց և Սինոդի Ս. Էջմիածնի, և տեղական վիճակաւոր Արքեպիսկոպոսի խնամածութեան ներքոյ»:

Ա. կրճապէս՝ երրորդ խնդրի համար («Նոր Նախիջևանի մէջ անցած վերջին անցքերի»), այսքանս միայն կարող ենք ասել, թէ «Նախիջևանը կարող էր ցանկալի բարեդարութեամբ և բարեշնորհութեամբ պայծառանալ, եթէ նորա բնակիչների սրտումը չտիրապետէր երկպառակութեան հոգին, որ սովոր է միշտ բաժանել ժողովուրդը երկու մասն՝ միմեանց հակառակ,

միմեանց չարակամ: Վաղաքը, որի բնակիչները բոլորը Հայք են և նորա կառավարութիւնը նոցա սեփական ձեռում, կարող էր, մին հայկական մաքուր և անխառն, ճշմարիտ ազգային հասարակութեան գաղափար ընծայել մեզ, մին օրինակ տալ այլ երկրներում բնակուած Հայերին, թէ որպէս կարող էր և պէտք էր լինել մին ժողովուրդ, մին հասարակութիւն, որ կառավարուում է ազգային հոգով, ազգային լուսավորութեամբ, նա ևս ազգային օրէնքներով՝ մարդկութեան այժմեան պահանջներին համաձայն: Անբաղդապէս հեռի են այդ մտքերից «Նախիջևանի մերաջնեայ բնակիչները և իւրեանց երկպառակութեամբ և քանի մի չարախտաւատ մարդկանց ցուցած ճանապարհը դնալով, պատճառում են զգալի ցաւ բոլոր ազգի սրտին:

Ուստի հասարակութեան ուշադրութիւնը ամենից առաւել զրաւող խնդիրների մէջ շարունակաբար ունի դեռ ևս առաջին տեղին (որպէս և պէտք է լինի) ստրկաց ազատութիւնը: Կառավարութեան կողմից այդ մասին հրատարակած կանոնադրութիւնները՝ յոյս ունինք որ յայտնի են արդէն մեր ընթերցողներին, որպէս և այն անկարգութիւնները, որ ծագեցան այլ և այլ գաւառներում այդպիսի խառնաշփոթ և բազմաբարդ գործի կատարման ժամանակ: Այդ անկարգութիւնները այժմ ևս տեւում են, թէ և մեծ ուշադրութեան արժանի չեն, որովհետև ոչ այլ ինչ են, եթէ ոչ չնչին դիպուածներ, ուր ծառաները ցոյց են տալիս երբեմն անհնազանդութիւն իւրեանց կալուածատեարց: Բայց նոյն անկարգութիւնների հետ միասին լինում են զանազան կերպով ուրախութեան յայտարարութիւններ, որ ունին առաւելապէս կրօնական յատկանիշ և բացայայտ ապացուցանում են, թէ ազգը զգում է զօրեղ համակրութիւն դէպ 'ի ստրկաց ազատութիւնը: Խւրաքանչիւր անձն բացասութեամբ իւր սրտի ուրախութիւնը իւր սեփական ձեռով: Սկսած այն ժամանակից, երբ Պ. Պաղոդինը տուաւ միտք այդ անցքի յիշատակի համար մին տաճար կառուցանել Պոսթոլայի մէջ Աղեքսանդր Նիվադայ անունով, ժողովուրդի ընծայաբերութիւնները ամենայն կողմից թափուում են առատօրէն:

Նշանաւոր երեւոյթ էր քաղաքումն նաև Զուլիս ամսի կէտումը եղած անցքը: Երծաթեղէն վաճառներով առևտուր առնողների կրպակները կնքեցին կառավարութեան հրամանով: Սորա պատճառը եղել է այն, որպէս լսուում է, որ արծաթեղէնով առևտուր առնող վաճառականները իւրեանց շնորհապարհքի վերայ որպէս թէ ինքեանք են գնում եղել փորձը կամ արծաթի աղնութեան աստիճանը (пробы), և համապատասխան այդ փորձը եղել է առաւել բարձր քան թէ նոյն խակ արծաթի արժողութիւնը: Ասում են, թէ այդ բանի համար լինում է այժմ քննութիւն, որի ընթացքը և հետևանքը կցանկանայինք իւր ժամանակին խմանալ, որ կարողանայինք հաղորդել մեր ընթերցողներին:

Ապրիլի 23 ին, այն է Ս. Զատիկի օրը, Աթդարխանու վիճակաւոր Արք. Եպիսկոպոսն Մարութիւն վահագեան, և վեցերորդ կարգի թարգ-

առաւել էր: Առաջնորդարանն լուսաւորած էր անթիւ ճրագներով և կտարածէր համայն քաղաքի վերայ իւր ճաճանչները, տան առաջինը փայլում էին երեք փակագիր (14-րդ), որոնց մէկի վերայ գծադրուած էր Օգոստոսիանոս Վայսերի անուան գլխագիրը, երկրորդն արտայայտում էր Վեհափառ Վաթուղիկոսի անունը, իսկ երրորդի վերայ նկարուած էր Էջմիածնայ Սուրբ Տաճարն: Երբէք ես չէի տեսած այնպիսի հոգեւոր ուրախութիւն, որ կատարէր մեր հայրենակիցներուն այս անմոռանալի օրը, ամէնքը շաղկապուած մի հոգով, կողջունէին միմեանց, վեր առաքելով բարեմաղթութիւն առ Վեհափառ Տաճարին, որ առատօրէն շնորհում է մեզ Տեառն Վատթէոս Հայրապետի ձեռամբ նոր կեանք և ամենատեսակ բարիքների:»

— Սրբազան Աբէլ Արքեպիսկոպոսն նշանակուեցաւ Պաշտօնակատար Թեմակալի վիճակին Ղարապաղու, և Սրբազան Գեորգ Արքեպիսկոպոսն՝ վիճակին Ատրպատականի, որ Պարսկաստանումն է: Երկու շողերը շովիւքն ևս արդէն գտանուում են իւրեանց վիճակներում:

— Մեր թղթակիցներից մինը գրում է մեզ Համախիւից. «Նոր ցանած չարութեան սերմունքն (1-ուտերականութիւնը) սկսել են բուսնիլ մեր քաղաքում, բայց մեր անխնջ շովուպետի՝ Վեհափառ Վատթէոս Վաթուղիկոսի, խոհեմ տնօրէնութեամբն ընդդէմ անիրաւներին՝ արդէն պատրաստեալ է մեր եկեղեցին»:

— Յունիսի 12 ին 1-ադարեան Ղեմարանի աշակերտները ներկայացուցին Թատրոնական գործողութիւն, Արարչ և Սահման վերնագրով, գրաւորաց աշխարհաբառ փոխուած:

— Պ. Խարայէլ Տէր Գրիգորեան Մամիկոնեանց, գրում է «Կռուկ» ամսագրի մէջ Մայիսի 20 ից թէ եկած է Ազուլիս՝ ամենեցուն ծանօթ Խորմեան Մկրտչ Վարդապետն, որ իւր քարոզութեամբ յախշտակել է ամենեցուն ու շարքութիւնը: «Այն քարոզների վառվածուն կայծերը, ասում է Պ. Մամիկոնեանցը՝ սուր թափանցից ամենեցունց սրտին և միանգամայն վառեց ամէնին՝ ազգասէր հոգւով խնամ տանել հայրենեաց և օգտաբեր լինել որդւոց ազգայնոց»: Այսպիսի քարոզութիւնքը Հ. Մ. Վարդապետին՝ անպատու չմնացին, որովհետեւ «նոյն Ազուլեաց իշխանները և մանաւանդ մեծանուն Տէրայ Պարոնայք, որպէս ասում է Պ. Մամիկոնեանցը, շարժեալ ի սիրոյ, միաբանութեան, լուսաւորութեան և ազգաշինութեան քարոզութեանց, որոշեցին մեծացնել իւրեանց ծխական վարժարանը՝ բաժանելով ի չորս դասատուն»:

— Անցինք թէ Աժդարխանու վիճակաւոր Արքեպիսկոպոսն Տ. Վատթէոս ձեռնադրել է քանի մի քահանայ՝ Նոր Կախիջեանի և Պեսասրապիոյ վիճակի համար, որոց մէջ և Պ. Յովհաննէս Օարիֆեանցին, որ քանի տարի առաջ 1-ադարեան Ղեմարանի աշակերտ էր: Աստուած տայ, որ այստեղեւ միշտ այդպիսի անձինք ձեռնադրուին, որովհետեւ նոքա գոնեաւ աւարտած են իւրեանց ուսման ընթացքը կանոնաւոր կերպիւ, և չեն նամում նոցա, որք միայն «... է...» իմանալով՝ արժանացած են՝ զեարդ և իցէ՝ քահանայ ձեռնադրուելու:

— Պարձեալ լսեցինք՝ թէ Սրբազնակատար վեհափառ Վաթուղիկոսը մատուցել է Ս. Էջմիածնի տպարանը նորոգելու, մանաւանդ «...» որովհետեւ մամուլները դեռ նոր են, որք բերուեցան հանգուցեալ Ներսէս Վաթուղիկոսի հրամանաւ:

Թագաւոր Վայսեր համաձայնութեամբ Մոսքուայի մէջ կազմուեցաւ ժողով, որի պարտականութիւնը պիտոյ է լինի որոնել յարմարաւոր տեղի՝ Ս. Աղեքսանդրի Նկվացւոյ անուամբ եկեղեցի կառուցանելու համար, ևս և զանազան կողմերից ստացուած նուիրաբերութիւնները և նոցա հաշիւը պահելու:

— Ուսմանցովի թանգարանը (Մուսէում) փոխադրուում է Փեթերպուրկից Մոսքուա: Նշանաւոր է թանգարանս մեր համար, որ ունի իւր մէջ Բարձրբերդացւոյն Վարդանայ Տիեզերական պատմութիւնը, հանգուցեալ Ներսէս Վաթուղիկոսից՝ իւր եպիսկոպոսութեան ժամանակը Ռուսեանցովին ընծայ ուղարկուած:

Ընցանելով դէպ ի Եւրոպա, կսկսենք մեր արտաքին տեսութիւնը Անդրկայից, ուր որ պատրաստութիւն են տեսնում մի ընդարձակ համալիրական տեսարանի, որի նմանը ի սկզբանէ աշխարհի մինչև ցայսօր չէ եղած. մինչև անգամ 1851 թուականի տեսարանը ևս սորա առաջն պիտի չլինէին համարուի: Սոյն այս տեսարանիս բացման օրն նշանակուած է առաջին օրն Մայիսի առաջինկայ 1862 թուականի: Տեսարանն պիտի բաժանուի նորա միջում պարունակելի նիւթերին համեմատ չորս բաժին, որ դարձեալ պիտի բաժանուին 40 կարգ, և պիտի գտնուին նորա մէջ դարձեալ արուեստական գործածներ, որպէս գտնուում էին 1851 թուականում՝ Փարիզի, Տուլիզի, և կամ Նիւ Եօրքի տեսարաններում, որ ոչ մի յաջողութիւն չունեցան: Բայց յայտնաւէ այսնոր տեսարանիս մէջ պիտի լինի առանձին բաժին գեղարուեստից համար: 1851 թուականում թոյլ էր տուած ունենալ միայն քանդակագործ պատկերներ, առաջինկայ տեսարանում՝ թոյլ տուութիւն եղաւ ունենալ և նկարուած պատկերներ, որոց կարգում պիտի լինին բոլոր աշխարհիս վերայ երևելի հանդիսացած նկարիչների աշխատանքը: Նոր տեսարանիս համար որոշուած տեղն է Հայտ-Փարքի մօտ, համարեալ թէ դէպ յանդիման այն տեղւոյն, ուր կանգնեցուցուած էր ապակեայ պալատն: Տան և տեսարանի ձևն (բլանը), որ նման է Ի Ռուսերէն տառին՝ պառկեցուցուած այսպէս Ի, աշխատասիրած է Ֆոուք Վապիտանը, և պիտի շինուի արևելից, և ոչ ապակիից, որպէս 1851 թուականին, և նորա մեծութիւնը ընթերցողների առաջն առաւել բացայայտ կացուցանելու համար, բերումէք քանի մի ստատիստիկական տեղեկութիւններ: Ապակեայ պալատի շինութեան ծախքը հաշուած էր 80,000 ֆունտ սթերլինգ. իսկ Ֆոուքի հաշուոյն նայելով՝ նոր կառուցանելի տան ծախքն պիտի հասանի մինչ 300,000: 1851 թուականի պալատն ունէր 851 ֆութ երկայնութիւն, 400 ֆութ լայնութիւն, և 160 բարձրութիւն: Տունն 1862 թուականի պիտի ունենայ 1200 ֆութ երկայնութիւն, 700 լայնութիւն, և 260 բարձրութիւն ապակեայ գրմբեթների տակ: Բաց յայտնաւէ մեքենական առանձին բաժինն պիտի ունեայ 1000 ֆութ երկայնութիւն, և 220 լայնութիւն: Տեսարանը պիտի տեւէ Մայիսի 1 ից մինչև Հոկտեմբերի 15 ին, որպէս եղաւ և 1851 թուականին: Այս տեսարանիս որպէս բացման հանդէսը, նոյնպէս և այլ արժանի գիտութեան և ուշադրութեան տեղեկութիւնները նորա վերայ, լրագիրս պարտականութիւն կհամարէ իւրեան նկարագրելու իւր ժամանակին:

— Կարիպալտին, որ յայտնի է արդէն ամենեցուն, և որ երկու ամսոյ միջոցում տիրեց Նեպոլու տէրութեանը, գտնուում է այժմ Բալիբիս կղզում, ուր և պարապում է երկրագործութեամբ, հասարակ գիւղացւոյ նման: Ասում են ևս թէ նա այս վերջին ժամանակներումն՝ նոյն կղզւոյն մէջ ջրհոր փորելու ժամանակ, գտած է ոսկւոյ և պղնձի հանք, և այսպէս ակամայ կամքը հարստացել է:

— Այս օրերումն Անդրկայ թագուհին հաստատեց Հնդկաստանի համար մի նոր ջրանշան հիւսիսային ճանապարհով անուանած:

— Թուրքիին մէջ կանգնեցուցին արձան Կարողոս Արպերտի յիշատակի համար, և այդ դիպուածումը Պ. Ռիքսդոլին կարդաց մի երկար ձառ:

ԽՍԲԱՅՐԻՉՔ Մ. Ե. Զ. ՄՍԵՐԵԱՆՅ